ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ

19.03.2024 16:46

ՀՀ փաստաբանների պալատը հյուրընկալել է Հյուսիսային համալսարանի իրավաբանական կլինիկայի ուսանողներին:

Ուսանողներին ողջունել է ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավար Լուսինե Սարգսյանը:

Լուսինե Սարգսյանն ուսանողներին է ներկայացրել ՀՀ փաստաբանների պալատի և Հանրային պաշտպանի գրասենյակի գործառույթներն ու առանձնահատկությունները, ինչպես նաև փաստաբան դառնալու ընթացակարգը և անհրաժեշտ պայմանները:

Այնուհետև ուսանողները շրջել են Փաստաբանների պալատի վարչական շենքում, եղել Փաստաբանական ակադեմիայում և Հանրային պաշտպանի գրասենյակում՝ անմիջականորեն ծանոթանալով աշխատանքային գործընթացին:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })